



DOI: 10.59560/18291155-2026.2-64

ՀՐԱՉՅԱ ՍԱՀԱԿՅԱՆ

*ՀՀ քննչական կոմիտեի
Երևան քաղաքի քննչական վարչության
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն
վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ,
Ռուս-հայկական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ, ասիստենտ*

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈԻԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԲԻՏՐԱԺ

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում են իրավասության վերաբերյալ վեճերի լուծման ոլորտում սահմանադրական դատարանի լիազորության ձևավորման տեսական, պատմական և համեմատական-իրավական օրինաչափությունները: Հետազոտության առարկան սահմանադրական դատարանի՝ նորմատիվ վերահսկողություն իրականացնող մարմնից դեպի սահմանադրական մարմինների միջև առաջացող կառուցակարգային հակասությունների իրավական արբիտրի վերաճման գործընթացն է: Հոդվածի նպատակն է բացահայտել, թե ինչպիսի պայմաններում և ինչ տրամաբանությամբ է սահմանադրական արդարադատության համակարգում ձևավորվում իրավասության և սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման ինքնուրույն գործառույթը: Այդ նպատակով վերլուծվում են սահմանադրության՝ որպես պետական իշխանության հիմնադիր, կազմակերպիչ և ուղղորդող ակտի բնույթը, սահմանադրական դատարանի դասական կելզենյան ընկալումը, ինչպես նաև Ավստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի սահմանադրական արդարադատության մոդելները: Առանձին ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետությունում տվյալ գործառույթի փուլային զարգացմանը՝ 1995 թվականի Սահմանադրության սկզբնական կարգավորումներից մինչև 2005 և 2015 թվականների սահմանադրական փոփոխություններն ու 2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված դատավարական կառուցակարգերը: Հիմնավորվում է, որ

Հայաստանի Հանրապետությունում գործող մոդելը փուլային եղանակով ձևավորվել է որպես սահմանադրական հավասարակշռության ապահովման միջոց, որի արդյունավետությունը պայմանավորված է լիազորության վերաբերյալ վեճերի և նորմատիվ վերահսկողության վարույթների հստակ տարանջատմամբ:

Հիմնաբառեր. Սահմանադրական դատարան, սահմանադրական արդարադատություն, իրավասության վերաբերյալ վեճեր, լիազորության վերաբերյալ վեճեր, նորմատիվ վերահսկողություն, ինստիտուցիոնալ արբիտրաժ, սահմանադրական հավասարակշռություն:

Ներածություն

Սահմանադրական դատարանի լիազորությունը՝ լուծելու սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը, ժամանակակից սահմանադրական արդարադատության այն ուղղություններից է, որի նշանակությունը չի սպառվում նորմատիվ վերահսկողության ավանդական գործառույթով: Սահմանադրությունը, լինելով ոչ միայն բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտ, այլև պետական իշխանության կազմակերպման և սահմանափակման հիմք, պահանջում է այնպիսի դատական-սահմանադրական մեխանիզմների առկայություն, որոնք ունակ են ապահովելու ոչ միայն իրավական ակտերի սահմանադրականությունը, այլև իշխանության սահմանադրական կենտրոնների միջև իրավասությունների և լիազորությունների հավասարակշռված բաշխումը: Այդ առումով Սահմանադրական դատարանի արբիտրաժային դերակատարության ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ արդիականություն՝ սահմանադրական կարգի ներքին կայունության և Սահմանադրության գերակայության գործնական իրացման և ապահովման խնդրի համատեքստում:

Թեմայի արդիականությունը Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրական մոդելի համար պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո պետական իշխանության կառուցվածքը դարձել է առավել բազմակենտրոն, իսկ սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունները՝ ավելի բարդ և փոխկապակցված: Այս պայմաններում լիազորությունների վերաբերյալ վեճերը չեն կարող դիտարկվել միայն որպես քաղաքական տարաձայնություններ. դրանք կարող են վերաժվել սահմանադրաիրավական բնույթի վեճերի, որոնց լուծումը պահանջում է դատավարական սահմանված չափանիշներ, վարութային ինքնուրույնություն և Սահմանադրական դատարանի մեկնաբանողական հավասարակշռված մոտեցում:

Հոդվածում քննարկվող օրինաչափությունները կարևոր են նաև սահմանադրական արդարադատության դոկտրինալ զարգացման տեսանկյունից: Համեմատական սահմանադրական փորձը ցույց է տալիս, որ սահմանադրական դատարանի արբիտրաժային գործառույթը կարող է դրսևորվել տարբեր կառուցակարգային ձևերով՝ ամբողջական, հատվածային կամ համակցված մոդելների միջոցով: Այդ փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության իրավակարգում գնահատելու ոչ միայն լիազորության վերաբերյալ վեճերի լուծման ինստիտուտի սահմանադրական ամրագրումը, այլև դրա դատավարական ինքնուրույնությունը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման համատեքստում տվյալ ինստիտուտի ուսումնասիրությունը պահանջում է փուլային մոտեցում: 1995 թվականի սահմանադրական մոդելում Սահմանադրական դատարանը հիմնականում հանդես էր գալիս որպես նորմատիվ վերահսկողության մարմին, 2005 թվականի փոփոխություններով առաջին անգամ սահմանադրականացվեց լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման գաղափարը, իսկ 2015 թվականի փոփոխություններով այն ձևակերպվեց որպես սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման ինքնուրույն իրավասություն: 2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով տվյալ լիազորությունը ստացավ պոզիտիվ ամրագրված դատավարական կառուցվածք, որի գործնական կիրառման չափանիշների և նորմատիվ վերահսկողությունից սահմանազատման հարցերը շարունակում են ունենալ դոկտրինալ և գործնական նշանակություն:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել Սահմանադրական դատարանի՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը լուծելու լիազորության տեսական հիմքերը, համեմատական սահմանադրական մոդելները և Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրական համակարգում դրա ձևավորման ու կիրառման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. վերլուծել սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ զարգացման այն հիմքերը, որոնց պայմաններում նորմատիվ վերահսկողության գործառույթը լրացվում է սահմանադրական արբիտրաժի դերակատարությամբ,
2. ուսումնասիրել պետական մարմինների միջև իրավասությունների և լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման համեմատական մոդելները՝ ավստրիական, գերմանական, ֆրանսիական և ռուսական փորձի օրինակով,

3. բացահայտել Հայաստանի Հանրապետությունում լիազորական վեճերի լուծման սահմանադրական ամրագրման փուլերը՝ 1995, 2005 և 2015 թվականների սահմանադրական մոդելների համատեքստում,

4. գնահատել 2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ձևավորված դատավարական կառուցակարգի նշանակությունը տվյալ լիազորության ինստիտուցիոնալացման համար:

1. Սահմանադրական դատարանի՝ որպես ինստիտուցիոնալ արբիտրաժի մարմնի ձևավորումը՝ սահմանադրական համակարգի զարգացման համատեքստում

Սահմանադրական դատարանի ձևավորումը նախ և առաջ պետք է մեկնաբանել սահմանադրության բնույթի մասին ընդհանուր ուսմունքի համատեքստում: Եթե սահմանադրությունը դիտվում է ոչ միայն որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտ, այլ նաև որպես պետական իշխանության հիմնադիր, կազմակերպիչ և ուղղորդող փաստաթուղթ, ապա նրանից բխող վերահսկողական և արբիտրաժային ինստիտուտները ձեռք են բերում ոչ թե երկրորդական, այլ կառուցակարգային նշանակություն¹:

Եվրոպական սահմանադրական արդարադատության ձևավորման վաղ փուլում առանցքային նշանակություն է ունեցել Սահմանադրության գերակայության ապահովումը՝ նորմատիվ վերահսկողության միջոցով: Հանս Կելզենի տեսական հայեցակարգում կենտրոնացված սահմանադրական վերահսկողությունը կառուցվում է այն գաղափարի վրա, որ Սահմանադրությանը հակասող օրենքների չեղարկումը պետք է վերապահվի հատուկ սահմանադրական մարմնի, որն օժտված է ընդհանուր իրավակարգի նկատմամբ «բացասական օրենսդրի» գործառույթով²: Համեմատական իրավագիտության մեջ ևս ընդունված է, որ ավստրիական 1920 թվականի մոդելը հենց այս տրամաբանությամբ համարվում է կենտրոնացված սահմանադրական արդարադատության դասական նախատիպը, իսկ Կելզենի 1928 թվականի աշխատությունը ձևակերպում է սահմանադրական դատարանի՝ որպես Սահմանադրության դատական երաշխավորի տեսական «կերպարը»³: Սակայն

¹ **Авакьян С.А.** Конституция России: природа, эволюция, современность. – М.: Российский юридический издательский дом, 1997. – С. 14–37.

² **Kelsen H.** Kelsen on the Nature and Development of Constitutional Adjudication, in: Vinx L. (ed.), The Guardian of the Constitution: Hans Kelsen and Carl Schmitt on the Limits of Constitutional Law, Cambridge, Cambridge University Press, 2015, pp. 22–78.

³ **Stone Sweet A.** Constitutional Courts, in: Rosenfeld M., Sajó A. (eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law, Oxford, Oxford University Press, 2012, pp. 816–830, DOI: 10.1093/oxfordhb/9780199578610.013.0040, հասանելի է՝ <https://academic.oup.com/edited-volume/43728/chapter-abstract/367620288?redirectedFrom=fulltext>, վերջին մուտք՝ 21.04.2026:

Կենտրոնացված սահմանադրական արդարադատության զարգացումը շատ արագ ցույց է տվել, որ սահմանադրական վերահսկողությունը չի կարող սահմանափակվել միայն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության ստուգմամբ: Սահմանադրությունը ոչ միայն նորմատիվ հիերարխիայի գագաթնակետն է, այլև հանրային իշխանության կազմակերպման հիմնարար ակտը: Ուստի նրա գերակայության ապահովումը պահանջում է ոչ միայն հակասահմանադրական նորմի վերացում, այլև սահմանադրական մարմինների միջև լիազորությունների սահմանների հստակեցում, այսինքն՝ այնպիսի արբիտրաժ, որն ի վիճակի է դատական եղանակով լուծել պետական իշխանության ներսում ծագող կառուցակարգային հակասությունները¹: Այս առումով սահմանադրական դատարանն աստիճանաբար ստացավ իր երկրորդ՝ ոչ պակաս կարևոր՝ որպես սահմանադրական իշխանության ներքին հավասարակշռության երաշխավոր հանդես գալու առաքելությունը:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է պարզել, թե այս անցման պատմական արմատներն առաջին անգամ որ պետության սահմանադրական արդարադատության նախապատմության մեջ են տեսանելի: Օգտագործված «առաջինը» հասկացության բովանդակությունը կախված է օգտագործվող սահմանման ֆորմալ-պատմական և ֆորմալ-դոգմատիկ ծավալից, մասնավորապես՝ ի՞նչ է ենթադրվում «առաջին» ասելով՝ սահմանադրական դատարանի իրավության վեճերի լուծման որևէ լիազորության ամենավաղ հիշատակումը, թե՞ ամենավաղ հիշատակումը կենտրոնացված և ամբողջական սահմանադրական դատարանի, որին վերապահված է իրավության վերաբերյալ վեճերի լուծման հստակ կառուցակարգ: Ֆորմալ-պատմական իմաստով, այսինքն՝ ամենավաղ հատուկ ստեղծված մարմինը, որն արդեն կոչվում էր «Սահմանադրական դատարան» և ուներ իրավասության բախումներ լուծելու լիազորություն՝ Ավստրիայի Սահմանադրական դատարանն էր, որը ստեղծվել էր 1919 թվականի հունվարի 25-ի օրենքով: Եթե, սակայն, «առաջինը» հասկացությունը վերցվում է ֆորմալ-դոգմատիկ իմաստով՝ որպես առաջին լիարժեք, կենտրոնացված, «կեղծենյան» տիպի մասնագիտացված սահմանադրական դատարան, ապա այն ձևավորվել է նույնպես Ավստրիայում, սակայն ձևավորման որոշիչ ակտն արդեն դառնում է 1920 թվականի հոկտեմբերի 1-ի Դաշնային սահմանադրական օրենքը: Ավստրիայի Սահմանադրական դատարանի պաշտոնական պատմությունը ցույց է տալիս, որ մինչև «Սահմանադրական դատարան» կոչվելը՝ դեռ 1867 թվականին գոյություն ունեցող Կայսերական

¹ **Garlicki L.** Constitutional Courts versus Supreme Courts, International Journal of Constitutional Law, Vol. 5, No. 1, 2007, pp. 44–68, DOI: 10.1093/icon/mol044, հասանելի է՝ <https://www.semanticscholar.org/paper/Constitutional-courts-versus-supreme-courts-Garlicki/9090f186419db2d9393f9254ef157f31160bbac9>, վերջին մուտք՝ 21.04.2026:

դատարանին վերապահված էին որոշ իրավասության բախումների լուծման գործառույթներ, որոնք սահմանափակվում էին տարածքային իշխանությունների միջև որոշակի դրամական հայցերի շրջանակով, իսկ 1920 թվականներին ձևավորված նոր սահմանադրական դատարանը ոչ միայն ստացավ նորմատիվ վերահսկողության գործառույթներ, այլև ժառանգեց և զարգացրեց պետական մարմինների փոխհարաբերությունների դատական կարգավորման որոշ տարրեր: 1920 թվականի սահմանադրական մոդելով դատարանի իրավասությունը համալրվեց օրենքների ու կանոնակարգերի վերահսկողությամբ, ընտրական վեճերի քննությամբ, միջազգային իրավունքի խախտումների որոշմամբ և պետական բարձրագույն մարմինների սահմանադրական պատասխանատվության հարցերով, ինչն արդեն հուշում էր, որ սահմանադրական դատարանը նախատեսվում էր ոչ միայն որպես նորմակոնտրոլի, այլև որպես սահմանադրական կառուցակարգի պահպանության մարմին¹:

Այս առումով Ավստրիայի Սահմանադրական դատարանի ամենավաղ իրավասության վեճերի շուրջ կայացված որոշումը թիվ K6/23 առ 21.01.1924 թ. որոշումն է: Գործը վերաբերում էր դաշնության և երկրամասի միջև իրավասության վեճին, իսկ որոշման հիմնական իմաստն այն է, որ Սահմանադրական դատարանի կողմից լուծման ենթակա իրավասության վեճ գոյություն չունի այն դեպքում, երբ նույն հարցի վերաբերյալ վեճի կողմերից որևէ իրավասու մարմին արդեն կայացրել է վերջնական և իրավական ուժ ունեցող որոշում: Նշված որոշման հղման սահմանադրական հիմքը պատմականորեն եղել է Ավստրիայի այն ժամանակ գործող Սահմանադրության 138-րդ հոդվածի 1-ին մասի «c» կետը, որը վերաբերում էր երկրամասերի միջև, ինչպես նաև երկրամասի և դաշնության միջև իրավասության վեճերին²:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս միտումը ավելի հստակ ինստիտուցիոնալ ձևակերպում ստացավ արևմտաեվրոպական սահմանադրական համակարգերում: Հետպատերազմյան Եվրոպայում սահմանադրական դատարանները դարձան «նոր սահմանադրականության» առանցքային ինստիտուտներ, քանի որ նրանք կոչված էին միաժամանակ պաշտպանելու հիմնարար իրավունքները, վերահսկելու օրենսդրին և կայունացնելու

¹ Der Österreichische Verfassungsgerichtshof, The History of the Constitutional Court: An Overview, official webpage, հասանելի է՝ https://www.vfgh.gv.at/verfassungsgerichtshof/geschichte/history_overview.en.html?utm_source=chatgpt.com, վերջին մուտք՝ 21.04.2026:

² Ավստրիայի Սահմանադրական դատարանի որոշում, K 6/23, 21.01.1924, Ավստրիայի Դաշնային իրավական տեղեկատվական համակարգ՝ RIS, փաստաթղթի համար՝ JFR_19240121_23K00006_01, հասանելի է՝ https://www.ris.bka.gv.at/Dokumente/Vfgh/JFR_19240121_23K00006_01/JFR_19240121_23K00006_01.pdf

խորհրդարանական կառավարման համակարգը: Այս միջավայրում սահմանադրական դատարանի գործառույթը սկսեց ընկալվել ոչ միայն որպես նորմատիվ ակտերի չեղարկման տեխնիկական իրավասություն, այլև որպես պետական մարմինների միջև բախումների լուծման սահմանադրական մեխանիզմ: Հենց այստեղ է, որ «բացասական օրենսդիր» հասկացությունը աստիճանաբար լրացվում է «սահմանադրական հավասարակշռության պահապան» գործառույթով¹:

Այսպես, սահմանադրական դատարանի լիազորությունների զարգացումը չի հանդիսանում պատահական կամ զուտ ինստիտուցիոնալ ընդլայնման արդյունք: Այն պայմանավորված է սահմանադրության՝ որպես պետական իշխանության կազմակերպման համակարգի բարդացմամբ, որի շրջանակում առաջացող կառուցակարգային հակասությունները պահանջում են ոչ միայն նորմատիվ վերահսկողություն, այլև դատական արբիտրաժ: Այսպիսով, սահմանադրական արդարադատության զարգացումը օրինաչափորեն հանգեցնում է սահմանադրական դատարանի՝ որպես ինստիտուցիոնալ հավասարակշռության ապահովման մարմնի ձևավորմանը:

2. Պետական մարմինների միջև վեճերի լուծման լիազորության համեմատական մոդելները. Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան

Համեմատական սահմանադրական իրավունքում պետական մարմինների միջև վեճերի լուծման առավել ամբողջական, համակարգված և տեսականորեն մշակված մոդելը ձևավորվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանին պետական բարձրագույն մարմինների միջև իրավասությունների կամ լիազորությունների ծավալի վերաբերյալ վեճեր լուծելու լիազորությունը վերապահվել է դեռևս 1949 թվականից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքով: Հիմնական օրենքն ընդունվել է 1949 թվականի մայիսի 23-ին: Սկզբնապես այդ լիազորությունը նախատեսված էր Հիմնական օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, իսկ 2024 թվականի դեկտեմբերի 20-ի սահմանադրական փոփոխությունից հետո, Դաշնային սահմանադրական դատարանի իրավասությունները բովանդակային առումով անփոփոխ պահպանվել են, սակայն տեղափոխվել են գործող Հիմնական օրենքի 94-

¹ **Kelsen H.** Kelsen on the Nature and Development of Constitutional Adjudication, in: Vinx L. (ed.), The Guardian of the Constitution: Hans Kelsen and Carl Schmitt on the Limits of Constitutional Law, Cambridge, Cambridge University Press, 2015, pp. 22–78.

Garlicki L. Constitutional Courts versus Supreme Courts, International Journal of Constitutional Law, Vol. 5, No. 1, 2007, pp. 44–68, DOI: 10.1093/icon/mol044, հասանելի է՝ <https://www.semanticscholar.org/paper/Constitutional-courts-versus-supreme-courts-Garlicki/9090f186419db2d9393f9254ef157f31160bbac9>, վերջին մուտք՝ 21.04.2026:

որ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ¹: Հետևապես, Գերմանական սահմանադրական համակարգում սահմանադրական դատարանը վաղուց արդեն ընկալվում է ոչ միայն որպես նորմատիվ վերահսկողության մարմին, այլև որպես սահմանադրական կառուցակարգի ներսում առաջացող հակասությունների լուծման իրավական արբիտր²:

Գործող կարգավորմամբ Դաշնային սահմանադրական դատարանը լուծում է Հիմնական օրենքի մեկնաբանության վերաբերյալ այն վեճերը, որոնք ծագում են բարձրագույն դաշնային մարմնի կամ Հիմնական օրենքով կամ բարձրագույն դաշնային մարմնի կանոնակարգով սեփական իրավունքներով օժտված այլ սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ծավալի առնչությամբ³: Այս մոդելի հիմքում այն գաղափարն է, որ Սահմանադրության գերակայությունը ենթադրում է ոչ միայն իրավական ակտերի սահմանադրականության ստուգում, այլև պետական բարձրագույն մարմինների սահմանադրական լիազորությունների դատական հստակեցում: Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքը նման վեճերի համար նախատեսում է առանձին վարույթ՝ սահմանելով դիմող և պատասխանող սուբյեկտների շրջանակը, դիմումի թույլատրելիության պայմանները, ինչպես նաև դատարանի որոշման բովանդակությունը: Մասնավորապես, նշված օրենքի 63-րդ բաժինը որպես կողմեր նշում է Դաշնային նախագահին, Բունդեսրադին, Բունդեսրատին, Դաշնային կառավարությանը և այդ մարմինների՝ սեփական իրավունքներով օժտված մասերին, իսկ 64-րդ բաժինը պահանջում է, որ դիմողը հիմնավորի իր սահմանադրական իրավունքների կամ պարտականությունների խախտումը կամ անմիջական վտանգումը⁴: Գերմանական մոտեցման առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական մարմինների միջև վեճը չի ընկալվում որպես պարզապես քաղաքական անհամաձայնություն, այլ որակվում է որպես սահմանադրաիրավական հարաբերությունից բխող

¹ Basic Law for the Federal Republic of Germany, 23 May 1949, Art. 93(1)(1), հասանելի է՝ https://en.wikisource.org/wiki/Basic_Law_for_the_Federal_Republic_of_Germany_%281949%29, վերջին մուտք՝ 04.05.2026:

² **Stone Sweet A.** Constitutional Courts, in: Rosenfeld M., Sajó A. (eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law, Oxford, Oxford University Press, 2012, pp. 816–830, DOI: 10.1093/oxfordhb/9780199578610.013.0040, հասանելի է՝ <https://academic.oup.com/edited-volume/43728/chapter-abstract/367620288?redirectedFrom=fulltext>, վերջին մուտք՝ 21.04.2026:

³ Basic Law for the Federal Republic of Germany, գործող պաշտոնական անգլերեն թարգմանություն, մասնավորապես՝ Դաշնային սահմանադրական դատարանի կարգավիճակն ու իրավասությունը սահմանող 93-94-րդ հոդվածներ, հասանելի է՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html, վերջին մուտք՝ 21.04.2026:

⁴ Bundesverfassungsgerichtsgesetz, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենք, մասնավորապես՝ 13-րդ, 63-67-րդ և 71-72-րդ բաժիններ, հասանելի է՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_bverfsgg/englisch_bverfsgg.html, վերջին մուտք՝ 21.04.2026:

իրավունքների և պարտականությունների ծավալի վերաբերյալ իրավական վեճ: Այդ պատճառով դատարանը ոչ միայն արձանագրում է սահմանադրական իրավունքի խախտման առկայությունը կամ բացակայությունը, այլև անհրաժեշտության դեպքում իր որոշման մեջ պարզաբանում է այն սահմանադրական նորմի մեկնաբանության համար էական իրավական հարցը, որի հիման վրա որոշվում է վեճը: Իրավասության վեճերի վերաբերյալ ոլորտում առաջին կամ ամենավաղ դասական որոշումներից է Դաշնային սահմանադրական դատարանի 1952 թվականի մարտի 6-ի որոշումը՝ 2BvE 1/51, BVerfGE 1, 144, որը հայտնի է որպես Բունդեսթագի կանոնակարգային ինքնավարության վերաբերյալ գործ, որը վերաբերում էր Բունդեսթագի ներքին կանոնակարգի սահմանադրաիրավական բնույթին, մասնավորապես՝ Դաշնային նախագահի Բունդեսթագում սահմանադրաիրավական վեճերի ժամանակ ներկայացուցչության իրավասությանը¹: Նշված պատճառներով է, որ գերմանական մոդելը հաճախ բնութագրվում է որպես սահմանադրական ինստիտուցիոնալ արբիտրաժի դասական օրինակ: Այս իմաստով գերմանական փորձը ցույց է տալիս, որ սահմանադրական դատարանի արբիտրաժային գործառույթը չի հակադրվում նրա նորմատիվ վերահսկողական գործառույթին, այլ վերջինիս տրամաբանական շարունակությունն է:

Ֆրանսիական մոդելը, իր հերթին, ձևավորվել է այլ տրամաբանությամբ: Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրական խորհուրդը ստեղծվել է 1958 թվականի Սահմանադրությամբ՝ Հինգերորդ Հանրապետության սահմանադրական կառուցակարգի շրջանակում, իսկ Սահմանադրությունը հաստատվել է 1958 թվականի սեպտեմբերի 28-ի հանրաքվեով²: Իր հերթին՝ Սահմանադրական խորհրդի կազմակերպման և գործունեության հիմնական օրգանական ակտը 1958 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 58-1067 կանոնագիրքն (օրդոնանս) է՝ «Սահմանադրական խորհրդի մասին օրգանական օրենքի մասին»³: Ֆրանսիայի սահմանադրական զարգացումն ամբողջությամբ չի հանգեցրել պետական մարմինների միջև լիազորության վերաբերյալ վեճերի լուծման այնպիսի համապարփակ դատավարական համակարգի, ինչպիսին առկա է Գերմանիայում: Այնուամենայնիվ, ֆրանսիական սահմանադրական իրավակարգում նույնպես

¹ BVerfG, Judgment of 6 March 1952, 2 BvE 1/51, BVerfGE 1, 144, հասանելի է՝ https://www.bundesverfassungsgericht.de/EN/Decisions/DecisionsPublishedInTheOfficialDigest/_functions/akkordeon_band1-9.html?nn=68514, վերջին մուտք՝ 04.05.2026:

² La Constitution de la Ve République, Conseil constitutionnel, ամբողջական գործող տեքստ, հասանելի է՝ <https://www.conseil-constitutionnel.fr/la-constitution/la-constitution-de-la-ve-republique-comment-est-elle-nee>, վերջին մուտք՝ 04.05.2026:

³ Constitution du 4 octobre 1958, Conseil constitutionnel, ամբողջական գործող տեքստ, հասանելի է՝ <https://www.conseil-constitutionnel.fr/le-bloc-de-constitutionnalite/texte-integral-de-la-constitution-du-4-octobre-1958-en-vigueur>, վերջին մուտք՝ 04.05.2026:

աստիճանաբար ձևավորվել են այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով Սահմանադրական խորհուրդը ներգրավվել է իշխանության տարբեր ճյուղերի և սահմանադրական մարմինների միջև սահմանների պահպանության գործում: Հետևաբար, թեև ֆրանսիական մոդելը չի ներկայացնում դասական «օրգանական վեճի» ամբողջական կառուցակարգ, այն ոչ պակաս կարևոր է, քանի որ ցույց է տալիս ինստիտուցիոնալ արբիտրաժի այլ՝ հատվածային և ֆունկցիոնալ ձև: Այսպես, Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածը նախատեսում է Կառավարության և խորհրդարանի պալատի նախագահի միջև անհամաձայնության դեպքում Սահմանադրական խորհրդի միջամտություն՝ օրենքի և կանոնակարգային կարգավորման ոլորտների սահմանները պահպանելու նպատակով: Այդ մեխանիզմն առաջին անգամ կիրառվել է Սահմանադրական խորհրդի 1959 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 59-1 FNR որոշմամբ, որտեղ Խորհուրդը հաստատել է, որ քննարկվող օրենսդրական առաջարկը չի մտնում Սահմանադրության 34-րդ հոդվածով օրենքին վերապահված ոլորտի մեջ, և վարչապետը իրավաչափորեն կիրառել է Ֆրանսիայի Սահմանադրության 41-րդ հոդվածով նախատեսված անընդունելիության առարկությունը¹:

Ֆրանսիական փորձի արժեքը հատկապես դրսևորվում է այն հանգամանքում, որ այնտեղ սահմանադրական վերահսկողության մարմնի արբիտրաժային գործառույթը դրսևորվում է ոչ թե մեկ միասնական վարույթի շրջանակում, այլ տարբեր սահմանադրական ինստիտուտների միջոցով: Սա ապացուցում է, որ պետական մարմինների միջև սահմանների պահպանությունը կարող է ապահովվել ոչ միայն համապարփակ և կառուցվածքային հատուկ վարույթով, այլև մասնատված, սակայն սահմանադրաիրավական տեսանկյունից արդյունավետ մեխանիզմների օգնությամբ: Այս առումով ֆրանսիական մոդելը կարևոր է որպես հիշեցում, որ ինստիտուցիոնալ արբիտրաժի ձևավորումը կարող է ունենալ ոչ միայն կոշտ համակարգված, այլև ճկուն և ֆունկցիոնալ բնույթ:

Ռուսական սահմանադրական արդարադատության մոդելը համեմատական սահմանադրական իրավունքի տեսանկյունից ներկայացնում է խառը կամ համակցված լուծում: Այն մեկ սահմանադրական դատարանի շրջանակում միավորում է մի քանի փոխկապակցված գործառույթներ՝ նորմատիվ վերահսկողությունը, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը և պետական մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճերի լուծումը: Ռուսաստանի Սահմանադրական դատարանի ստեղծման օր է համարվում 1991 թվականի հոկտեմբերի 30-ը, երբ ընտրված դատավորներն անցկացրել են առաջին աշխատանքային խորհրդակցությունը, իսկ 1992 թվականի հունվարի 14-ին տեղի է ունեցել դատարանի

¹ Décision n° 59-1 FNR du 27 novembre 1959, Conseil constitutionnel, հասանելի է՝ <https://www.conseil-constitutionnel.fr/decision/1959/591FNR.html>, վերջին մուտք՝ 04.05.2026:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ծ ՏԵՂԵԿԱԳԻՐ Ծ 2(123) 2026

² Федеральный конституционный закон от 21 июля 1994 года № 1-ФКЗ “О Конституционном Суде Российской Федерации”, հոդված 3, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի պաշտոնական կայք, հասանելի է՝ <https://www.ksrf.ru/about/legalbases/FCLM/Article3.php>, վերջին մուտք՝ 04.05.2026:

պայմաններում, որտեղ Սահմանադրական դատարանին վերապահվել է պետական-կառուցակարգային հավասարակշռությունը պահպանելու ընդգծված դեր: Այդ իմաստով ռուսական փորձը ցույց է տալիս, որ իրավասության վերաբերյալ վեճերի լուծման ինստիտուտը կարող է ծառայել ոչ միայն սահմանադրականության ապահովմանը, այլև պետական իշխանության մարմինների միջև իրավասությունների սահմանների իրավական հստակեցմանը: Ռուսաստանի Սահմանադրական դատարանի պաշտոնական աղբյուրներում նշվում է, որ 1992 թվականի հունվարի 14-ին կայացած առաջին նիստում քննվել է ՌՍՖՍՀ նախագահի՝ պետական անվտանգության և ներքին գործերի նախարարությունները միավորելու մասին հրամանագրի սահմանադրականության հարցը, և դատարանը գտել է, որ տվյալ հրամանագիրը հակասում է Սահմանադրությանը, քանի որ այն խախտում էր իշխանությունների բաժանման սկզբունքը և բարձրագույն պետական մարմինների իրավասությունների սահմանազատումը¹:

Ռուսական գործող մոդելը ցույց է տալիս նաև, որ իրավասության վեճերի լուծման լիազորությունը կարող է ամրագրվել այնպիսի սահմանադրական համակարգում, որտեղ կենտրոնական իշխանության կազմակերպումը համեմատաբար ուժեղ է, իսկ սահմանադրական դատարանին վերապահվում է ավելի ընդգծված պետական-կառուցակարգային դեր: Այս իմաստով ռուսական փորձը կարևոր է այն հարցին անդրադառնալու համար, թե ինչպիսի պայմաններում է սահմանադրական դատարանը վերածվում ոչ միայն սահմանադրականության, այլև պետական կառավարման կառուցվածքային հավասարակշռության պահպանման մարմնի:

Ուսումնասիրված փորձը ցույց է տալիս, որ պետական մարմինների միջև իրավասությունների և լիազորությունների սահմանների վերաբերյալ վեճերի լուծումը ժամանակակից սահմանադրական արդարադատության ինքնուրույն և կարևոր գործառնություններից է: Գերմանական մոդելը ներկայացնում է այս ինստիտուտի առավել ամբողջական և դասական ձևը, որտեղ սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես սահմանադրական մարմինների միջև ծագող իրավական հակասությունների ինստիտուցիոնալ արբիտր: Ֆրանսիական մոդելը, ի տարբերություն դրա, կառուցված չէ միասնական «օրգանական վեճի» վարույթի վրա, սակայն ցույց է տալիս, որ իշխանությունների սահմանադրական սահմանների պահպանումը կարող է արդյունավետորեն ապահովվել նաև հատվածային և ֆունկցիոնալ մեխանիզմների միջոցով: Ռուսական մոդելը, իր հերթին, վկայում է, որ իրավասության վեճերի լուծման լիազորությունը կարող է ամրագրվել որպես

¹ Constitutional Court of the Russian Federation, պաշտոնական կայք, առաջին նիստի և ՌՍՖՍՀ նախագահի հրամանագրի սահմանադրականության վերաբերյալ գործի նկարագրություն, հասանելի է՝ <https://www.ksrf.ru/en/about/History.php>, վերջին մուտք՝ 04.05.2026:

սահմանադրական դատարանի առանձին և ինքնուրույն լիազորություն՝ զուգակցվելով նորմատիվ վերահսկողության և Սահմանադրության մեկնաբանության գործառույթների հետ՝ կոշտ կենտրոնացված պետական համակարգերում:

Այսպիսով, համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սահմանադրական դատարանի արբիտրաժային գործառույթը չի հակադրվում սահմանադրական վերահսկողությանը, այլ լրացնում է այն՝ ապահովելով պետական իշխանության մարմինների միջև իրավասությունների սահմանների հստակեցումը, սահմանադրական հավասարակշռության պահպանումը և Սահմանադրության գերակայության գործնական իրացումը: Ուսումնասիրված մոդելները վկայում են, որ տվյալ ինստիտուտի կառուցակարգային ձևը կարող է տարբեր լինել՝ ամբողջական, հատվածային կամ համակցված, սակայն դրա ընդհանուր նշանակությունը նույնն է՝ սահմանադրական կարգի ներսում առաջացող ինստիտուցիոնալ հակասությունների տեղափոխումը քաղաքական հարթությունից իրավական լուծման տիրույթ:

Հենց այս տեսանկյունից պետք է գնահատել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացումը, որտեղ նման լիազորության ամրագրումը հանդիսանում է պետական իշխանության կառուցվածքի բարդացման և սահմանադրական հարաբերությունների դատական կարգավորման անհրաժեշտության տրամաբանական արդյունք:

3. Հայաստանի Հանրապետությունում իրավասության վերաբերյալ վեճերի լուծման լիազորության ձևավորումը

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանի՝ պետական մարմինների միջև լիազորությունների շուրջ ծագող վեճերը լուծելու լիազորության ձևավորումը կրել է փուլային բնույթ և պայմանավորված է եղել ոչ միայն սահմանադրական արդարադատության ինստիտուտի ներքին զարգացմամբ, այլև պետական իշխանության կազմակերպման մոդելի փոփոխությամբ: Այդ լիազորությունը սկզբնական շրջանում բացակայում էր որպես ինքնուրույն սահմանադրական գործառույթ, ապա ճանաչվեց սահմանադրական մակարդակում, այնուհետև ստացավ ավելի հստակ կառուցակարգային բնույթ և, վերջապես, 2018 թվականից ձևավորվեց որպես հարաբերականորեն ամբողջական դատավարական ինստիտուտ: Հետևաբար, խոսքը մեկ ակտով ստեղծված լիազորության մասին չէ, այլ սահմանադրական զարգացման հետևողական գործընթացի, որի յուրաքանչյուր փուլ արտացոլել է պետական իշխանության կազմակերպման տվյալ մոդելի պահանջները:

1995 թվականի Սահմանադրությամբ ստեղծված Սահմանադրական դատարանը կառուցված էր նախ և առաջ որպես կենտրոնացված սահմանադրական վերահսկողության մարմին: Ընդհանուր առմամբ այս փուլը Հայաստանի Հանրապետության համար սկզբնականն էր: Սահմանադրության սկզբնական

խմբագրության 100-րդ հոդվածը նրան վերապահում էր օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի ու կարգադրությունների, կառավարության որոշումների սահմանադրականության որոշումը, միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցի քննությունը, ընտրական որոշ վեճերի լուծումը և մի շարք հատուկ եզրակացությունների տրամադրումը: Սակայն նույն հոդվածը չէր նախատեսում պետական մարմինների միջև լիազորության շուրջ ծագող վեճերի լուծման առանձնացված իրավասություն: Սա նշանակում է, որ հայկական սահմանադրական արդարադատության սկզբնական մոդելում Սահմանադրական դատարանը դեռևս չէր դիտարկվում որպես պետական իշխանության ներսում ծագող կառուցակարգային հակասությունների ընդհանուր արբիտր: Այս իրավիճակը պետք է մեկնաբանել նաև տվյալ ժամանակաշրջանի պետական կառուցվածքի համատեքստում: 1995 թվականի Սահմանադրությունը ձևավորում էր նախագահակենտրոն համակարգ, որտեղ իշխանական հիերարխիան հարաբերականորեն ավելի ուղղաձիգ էր, ուստի ինստիտուցիոնալ հակասությունների զգալի հատվածը լուծվում էր քաղաքական-կառավարման ներհամակարգային միջոցներով: Հետևաբար լիազորության վերաբերյալ վեճերի սահմանադրական դատավարական կարգավորման բացակայությունը տվյալ փուլում արտացոլում էր ոչ այնքան նորմատիվ բացթողումը, որքան կառավարման համակարգի կառուցվածքային տրամաբանությունը: Այդ փուլում Սահմանադրական դատարանի հիմնական առաքելությունը Սահմանադրության գերակայության նորմատիվ ապահովումն էր, այլ ոչ թե իշխանության տարբեր կենտրոնների միջև կառուցակարգային բախումների լուծումը¹:

Սահմանադրական դատարանի լիազորությունների զարգացման առումով առաջին էական շրջադարձը կապված է 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների հետ: Այդ փոփոխություններով Սահմանադրության 100-րդ հոդվածում ներառվեց 1.1-ին կետը, որով Սահմանադրական դատարանին վերապահվեց լուծել պետական իշխանության սահմանադրական մարմինների, ինչպես նաև դրանց և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների սահմանադրականության հարցերով առաջացած վեճերը՝ դրանով իսկ սահմանելով այս լիազորության ծագման անցումային փուլը: Սա սկզբունքային նշանակության փոփոխություն էր, քանի որ առաջին անգամ հայկական սահմանադրական կարգավորումը ճանաչեց, որ Սահմանադրության

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով, ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայք, հասանելի է՝ <https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-endownvats-1995-t-yakani-howlisi-5-i-hanrak-veov>, վերջին մուտք՝ 04.05.2026:

գերակայությունը վերաբերում է ոչ միայն նորմատիվ ակտերին, այլև պետական իշխանության մարմինների միջև լիազորությունների բաշխմանը: Այնուամենայնիվ, 2005 թվականի մոդելը դեռևս չէր կարող համարվել լիարժեք ձևավորված համակարգ: Նախ՝ օգտագործվող ձևակերպումը՝ «լիազորությունների սահմանադրականության հարցերով առաջացած վեճեր», ավելի լայն և միաժամանակ ավելի անորոշ էր, քան հետագա սահմանադրական լուծումը: Այն ամբողջությամբ չէր բացահայտում՝ արդյոք խոսքը վերաբերում է լիազորության պատկանելությանը, դրա իրականացման սահմաններին, թե մարմինների վարքագծի սահմանադրականությանը: Երկրորդ՝ տվյալ մոդելը նույն դրույթի շրջանակում ներառում էր նաև տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը, ինչը ցույց է տալիս, որ օրենսդիրը դեռևս ամբողջությամբ չէր տարանջատում պետական սահմանադրական մարմինների միջև օրգանային վեճերը և պետություն–համայնք բնույթի սահմանադրական հակասությունները: Երրորդ՝ դատավարական կառուցվածքը դեռևս բավարար չափով համակարգված չէր, քանի որ սահմանադրական մակարդակում ճանաչված լիազորությունը չէր ստացել այնքան մանրամասն օրենսդրական կոնկրետացում, որքան դա կատարվեց հետագայում, ինչպես նաև հստակեցված չէր՝ խոսքը գնում է բոլոր լիազորությունների, թե միայն սահմանադրական լիազորությունների մասին¹: Բացի այդ, տեսական և գործնական մակարդակում անհասկանալի էր՝ եթե որևէ մարմնի լիազորություն սահմանված էր Սահմանադրությամբ, ապա ինչպե՞ս կարող էր քննարկվել այդ լիազորության սահմանադրականությունը: Այդուհանդերձ, 2005 թվականի փոփոխությունների պատմական նշանակությունը չի կարելի թերագնահատել: Հենց այս փուլում հայկական սահմանադրական իրավունքը փաստորեն ընդունեց, որ պետական մարմինների միջև լիազորությունների բաշխման հարցը կարող է և պետք է դառնա սահմանադրական արդարադատության առարկա: Ուստի այս փուլը կարելի է բնութագրել որպես լիազորության վերաբերյալ վեճերի սահմանադրականացման նախատիպային փուլ, որը նախապատրաստեց հետագա համակարգային վերակառուցումը:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունները տվյալ լիազորության զարգացման վճռորոշ փուլն էին: Գործող Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով հստակ ամրագրվեց, որ Սահմանադրական դատարանը լուծում է «սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը»: Այս խմբագրությունն արդեն էապես տարբերվում էր 2005 թվականի մոդելից: Վեճի առարկան հստակ կապվեց հենց սահմանադրական մարմինների՝ իրենց սահմանադրական լիազորությունների հետ,

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2005 թվականի փոփոխություններով, հասանելի է՝ <https://www.arlis.am/hy/acts/21275>, վերջին մուտք՝ 04.05.2026:

այսինքն՝ սահմանադրական դատավարության առարկան դարձավ ավելի որոշակի, կառուցակարգային և նյութականորեն հստակեցված: 2015 թվականի լուծման խորքային իմաստը բացահայտվում է Հայաստանի կառավարման ձևի փոփոխության համատեքստում: Խորհրդարանական կառավարման մոդելին անցումը հանգեցրեց նրան, որ պետական իշխանության ներսում ավելացան հարաբերականորեն ինքնուրույն սահմանադրական կենտրոնները, փոխվեց Հանրապետության նախագահի սահմանադրական դերը, ուժեղացավ Ազգային ժողովի և Կառավարության միջև ինստիտուցիոնալ փոխկապակցվածությունը, ձևավորվեց Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես առանձին սահմանադրական մարմին¹: Այս պայմաններում պետական իշխանության համակարգը դարձավ ավելի բազմաբևեռ, իսկ այդպիսի բազմաբևեռ համակարգում լիազորությունների բախման հավանականությունը, բնականաբար, մեծանում է: Հետևաբար 2015 թվականին լիազորության վերաբերյալ վեճերի քննության սահմանադրական ամրագրումը պետք է դիտարկել որպես նոր կառավարման մոդելին համարժեք սահմանադրական արբիտրաժի ստեղծում: Նույն տրամաբանությամբ վերափոխվեց նաև դատավարական լեգիտիմացիայի սահմանադրական հիմքը: Սահմանադրության 169-րդ հոդվածը 168-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված վարույթով դիմելու իրավունք վերապահեց պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդին, Հանրապետության նախագահին, Կառավարությանը, Բարձրագույն դատական խորհրդին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս մոտեցումը վկայում է, որ օրենսդիրը փորձել է դիմելու իրավունքը կապել ոչ թե վերացական քաղաքական հետաքրքրվածության, այլ կոնկրետ սահմանադրական դիրքի պաշտպանության հետ: Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով տվյալ լիազորությունը ոչ միայն ամրագրվեց, այլև վերակառուցվեց որպես պետական իշխանության ներսում սահմանադրական հավասարակշռության պահպանման գործիք:

2015 թվականի սահմանադրական ամրագրումը գործնական առումով լիարժեք դարձավ 2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ընդունմամբ²: Նշված օրենքի 75-րդ հոդվածն առաջին անգամ համեմատաբար մանրամասն կերպով կարգավորեց սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի քննության ընթացակարգը: Այն սահմանեց դիմողների

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով, հասանելի է՝ <https://www.president.am/hy/constitution-2015/>, վերջին մուտք՝ 04.05.2026:

² Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Սահմանադրական դատարանի մասին», ընդունված 2018 թվականի հունվարի 17-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/hy/acts/119246>, վերջին մուտք՝ 04.05.2026:

շրջանակը, պատասխանողների կազմը, դիմումի ներկայացման ժամկետը, ապացուցման կառուցվածքը, դատարանի կողմից ընդունվող որոշումների տեսակները, ինչպես նաև այն հնարավորությունը, որ դատարանը նման գործով գնահատի նաև վիճարկվող գործողության, անգործության կամ ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը: Այսպիսով, հենց 2018 թվականի օրենքով տվյալ լիազորությունը վերաձվեց հարաբերականորեն ամբողջական դատավարական ինստիտուտի:

Ուստի 2018 թվականի փուլը պետք է գնահատել որպես ինստիտուցիոնալացման, բայց ոչ վերջնական կայացման փուլ: Գործող մոդելի հասունացման հաջորդ փուլը կապված է ոչ այնքան նոր սահմանադրական կամ օրենսդրական փոփոխությունների, որքան Սահմանադրական դատարանի մեկնաբանողական գործունեության հետ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի ՍԴԱՌ-27 աշխատակարգային որոշումը, որտեղ դատարանը շեշտել է, որ սահմանադրական-դատական պաշտպանության իրավունքը չի ենթադրում համապատասխան սուբյեկտի՝ իր հայեցողությամբ ցանկացած միջոց կամ ընթացակարգ ընտրելու հնարավորություն, և եթե ձևականորեն 168-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացվող պահանջն իրականում վերաբերում է 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմատիվ վերահսկողության հարցին, ապա գործը տվյալ մասով ենթակա է կարճման¹: Այս դիրքորոշումը կարևոր է, որովհետև այն սահմանազատում է լիազորության վերաբերյալ վեճի վարույթը նորմատիվ վերահսկողությունից և կանխում է տվյալ ընթացակարգի վերաժումը ցանկացած նորմատիվ խնդրի լուծման համընդհանուր միջոցի:

Հետևաբար ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տվյալ լիազորության զարգացումը մտել է դոկտրինալ հստակեցման փուլ: Այժմ առանցքային հարցն արդեն այն չէ, թե արդյոք նման լիազորություն գոյություն ունի, այլ այն, թե ինչպիսի չափանիշներով պետք է որոշվի՝ երբ է վեճը իսկապես վերաբերում սահմանադրական լիազորությանը, երբ է այն խառնվում նորմատիվ վերահսկողության հետ, և որքանով կարող է դատարանը նման գործերով հաղթահարել իրավական անորոշությունը՝ չանցնելով դատական իրավաստեղծության սահմանը: Այս փուլը դեռևս ավարտված չէ, և հենց այստեղ է որոշվելու գործող մոդելի գործնական արդյունավետության աստիճանը:

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 26-ի ՍԴԱՌ-27 աշխատակարգային որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ կարճելու մասին, հասանելի է՝ <https://www.concourt.am/decision/decisions/2021-hy-sdav-sdav-27.pdf>, վերջին մուտք՝ 04.05.2026:

Եզրակացություն

Սահմանադրական դատարանի լիազորությունը՝ լուծելու սահմանադրական մարմինների միջև լիազորության վերաբերյալ վեճերը, պետք է դիտարկվի ոչ թե որպես նորմատիվ վերահսկողության արտաքին կամ պատահական հավելում, այլ որպես սահմանադրական արդարադատության զարգացման օրինաչափ փուլ: Սահմանադրությունը, լինելով ոչ միայն բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտ, այլև պետական իշխանության կազմակերպման հիմք, պահանջում է այնպիսի մարմնի առկայություն, որը կարող է ապահովել ոչ միայն իրավական ակտերի սահմանադրականությունը, այլև իշխանության սահմանադրական կենտրոնների միջև լիազորությունների հավասարակշռված բաշխումը: Այս իմաստով հոդվածի հիմնական գիտական գաղափարն այն է, որ սահմանադրական դատարանը ժամանակակից իրավակարգում վերաճում է «բացասական օրենսդրի» դասական կերպարից դեպի ինստիտուցիոնալ արբիտրի դերակատարություն: Համեմատական իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ լիազորության վերաբերյալ վեճերի լուծման ինստիտուտը կարող է ունենալ տարբեր կառուցակարգային ձևեր՝ գերմանական ամբողջական և դասական մոդել, ֆրանսիական հատվածային և ֆունկցիոնալ մոտեցում, ինչպես նաև ռուսական համակցված մոդել, որտեղ իրավասության վեճերի լուծումը հանդես է գալիս որպես սահմանադրական դատարանի առանձին լիազորություն՝ կենտրոնացված պետական համակարգի համատեքստում: Այս համեմատությունը Հայաստանի Հանրապետության իրավակարգի համար կարևոր է այն առումով, որ այն հաստատում է՝ լիազորության վերաբերյալ վեճերի ինստիտուտի արդյունավետությունը կախված չէ միայն դրա սահմանադրական ամրագրումից, այլ նաև դրա դատավարական ինքնուրույնությունից, դիմող սուբյեկտների ճիշտ ընտրված շրջանակից, վարույթի առարկայի հստակությունից և Սահմանադրական դատարանի որոշումների գործնական իրացվելիությունից: Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացումը ներկայացվում է որպես փուլային գործընթաց. 1995 թվականի մոդելում Սահմանադրական դատարանը հիմնականում հանդես էր գալիս որպես նորմատիվ վերահսկողության մարմին, 2005 թվականի փոփոխություններով առաջին անգամ սահմանադրականացվեց լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման գաղափարը, իսկ 2015 թվականի փոփոխություններով այն ձևակերպվել է որպես սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման ինքնուրույն իրավասություն: Միևնույն ժամանակ, չնայած 2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով այդ լիազորությունը ստացավ դատավարական կառուցվածք, սակայն գործող մոդելը դեռ գտնվում է ոչ թե վերջնական կայացման, այլ դոկտրինալ և պրակտիկ հստակեցման փուլում:

Օգտագործված նորմատիվ-իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ-իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով, ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայք, հասանելի է՝

<https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-endownvats-1995-t-vakani-howlisi-5-i-hanrak-veov>, վերջին մուտք՝ 04.05.2026:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2005 թվականի փոփոխություններով, հասանելի է՝ <https://www.arlis.am/hy/acts/21275>, վերջին մուտք՝ 04.05.2026:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով, հասանելի է՝ <https://www.president.am/hy/constitution-2015/>, վերջին մուտք՝ 04.05.2026:

4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Սահմանադրական դատարանի մասին», ընդունված 2018 թվականի հունվարի 17-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/hy/acts/119246>, վերջին մուտք՝ 04.05.2026:

5. Basic Law for the Federal Republic of Germany, 23 May 1949, Art. 93(1)(1), հասանելի է՝

https://en.wikisource.org/wiki/Basic_Law_for_the_Federal_Republic_of_Germany_%281949%29, վերջին մուտք՝ 04.05.2026:

6. Basic Law for the Federal Republic of Germany, գործող պաշտոնական անգլերեն թարգմանություն, մասնավորապես՝ Դաշնային սահմանադրական դատարանի կարգավիճակն ու իրավասությունը սահմանող 93-94-րդ հոդվածներ, հասանելի է՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html, վերջին մուտք՝ 21.04.2026:

7. Bundesverfassungsgerichtsgesetz - Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենք, մասնավորապես՝ 13-րդ, 63-67-րդ և 71-72-րդ բաժիններ, հասանելի է՝

https://www.gesetze-im-internet.de/englisch_bverfgg/englisch_bverfgg.html, վերջին մուտք՝ 21.04.2026:

8. Constitution du 4 octobre 1958, Conseil constitutionnel, ամբողջական գործող տեքստ, հասանելի է՝

<https://www.conseil-constitutionnel.fr/le-bloc-de-constitutionnalite/texte-integral-de-la-constitution-du-4-octobre-1958-en-vigueur>, վերջին մուտք՝ 04.05.2026:

9. Федеральный конституционный закон от 21 июля 1994 года № 1-ФКЗ «О Конституционном Суде Российской Федерации», հոդված 3, Ռուսաստանի

Դաշնության սահմանադրական դատարանի պաշտոնական կայք, հասանելի է՝ <https://www.ksrf.ru/about/legalbases/FCLM/Article3.php>, վերջին մուտք՝ 04.05.2026:

Դատական ակտեր և սահմանադրական արդարադատության պրակտիկա

10. Ավստրիայի Սահմանադրական դատարանի որոշում, K 6/23, 21.01.1924, Ավստրիայի Դաշնային իրավական տեղեկատվական համակարգ՝ RIS, փաստաթղթի համար՝ JFR_19240121_23K00006_01, հասանելի է՝ https://www.ris.bka.gv.at/Dokumente/Vfgh/JFR_19240121_23K00006_01/JFR_19240121_23K00006_01.pdf, վերջին մուտք՝ 04.05.2026:

11. BVerfG, Judgment of 6 March 1952, 2 BvE 1/51, BVerfGE 1, 144, հասանելի է՝ https://www.bundesverfassungsgericht.de/EN/Decisions/DecisionsPublishedInTheOfficialDigest/_functions/akkordeon_band1-9.html?nn=68514, վերջին մուտք՝ 04.05.2026:

12. Décision n° 59-1 FNR du 27 novembre 1959, Conseil constitutionnel, հասանելի է՝ <https://www.conseil-constitutionnel.fr/decision/1959/591FNR.htm>, վերջին մուտք՝ 04.05.2026:

13. ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 26-ի ՍԴԱՈ-27 աշխատակարգային որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից իր լիազորությունների իրականացման, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ կարճելու մասին, հասանելի է՝ <https://www.concourt.am/decision/decisions/2021-hy-sdav-sdav-27.pdf>, վերջին մուտք՝ 04.05.2026:

Գիտական գրականություն

14. **Авакьян С.А.** Конституция России: природа, эволюция, современность. – М.: Российский юридический издательский дом, 1997.

15. **Kelsen H.** Kelsen on the Nature and Development of Constitutional Adjudication, in: Vinx L. (ed.), The Guardian of the Constitution: Hans Kelsen and Carl Schmitt on the Limits of Constitutional Law, Cambridge, Cambridge University Press, 2015, pp.

16. **Stone Sweet A.** Constitutional Courts, in: Rosenfeld M., Sajó A. (eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law, Oxford, Oxford University Press, 2012, DOI: 10.1093/oxfordhb/9780199578610.013.0040, հասանելի է՝ <https://academic.oup.com/edited-volume/43728/chapter-abstract/367620288?redirectedFrom=fulltext>, վերջին մուտք՝ 21.04.2026:

17. **Garlicki L.** Constitutional Courts versus Supreme Courts, International Journal of Constitutional Law, Vol. 5, No. 1, 2007, pp. 44–68, DOI: 10.1093/icon/mol044, հասանելի է՝

է՝ <https://www.semanticscholar.org/paper/Constitutional-courts-versus-supreme-courts-Garlicki/9090f186419db2d9393f9254ef157f31160bbac9>, վերջին մուտք՝ 21.04.2026:

Պաշտոնական աղանց աղբյուրներ

18. Der Österreichische Verfassungsgerichtshof, The History of the Constitutional Court: An Overview, official webpage, հասանելի է՝

https://www.vfgh.gv.at/verfassungsgerichtshof/geschichte/history_overview.en.html?utm_source=chatgpt.com, վերջին մուտք՝ 21.04.2026:

19. La Constitution de la Ve République: Conseil constitutionnel, հասանելի է՝

<https://www.conseil-constitutionnel.fr/la-constitution/la-constitution-de-la-ve-republique-comment-est-elle-nee>, վերջին մուտք՝ 04.05.2026:

20. History of the Constitutional Court of the Russian Federation, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի պաշտոնական կայք, հասանելի է՝ <https://www.ksrf.ru/en/about/History.php>, վերջին մուտք՝ 04.05.2026:

ЗАКОНОМЕРНОСТИ ФОРМИРОВАНИЯ ПОЛНОМОЧИЯ КОНСТИТУЦИОННОГО СУДА В СФЕРЕ РАЗРЕШЕНИЯ СПОРОВ О КОМПЕТЕНЦИИ: ОТ НОРМАТИВНОГО КОНТРОЛЯ К ИНСТИТУЦИОНАЛЬНОМУ АРБИТРАЖУ

Аннотация

В статье исследуются теоретические, исторические и сравнительно-правовые закономерности формирования полномочия конституционного суда по разрешению споров о компетенции. Предметом исследования является процесс трансформации конституционного суда из органа нормативного контроля в правового арбитра, призванного разрешать институциональные противоречия между конституционными органами. Цель статьи состоит в выявлении условий и логики формирования самостоятельной функции разрешения споров о компетенции и конституционных полномочиях в системе конституционного правосудия. В связи с этим анализируются природа конституции как учредительного, организационного и направляющего акта государственной власти, классическая кельзеновская модель конституционного контроля, а также модели конституционного правосудия Австрии, Германии, Франции и России. Особое внимание уделяется поэтапному развитию соответствующего полномочия в Республике Армения: от первоначальной модели Конституции 1995 года до конституционных изменений 2005 и 2015 годов, а также процессуальных механизмов, предусмотренных Конституционным законом 2018 года «О Конституционном Суде». Обосновывается, что действующая в Республике Армения модель сформировалась как средство обеспечения конституционного равновесия,

однако ее эффективность зависит от четкого разграничения производства по спорам о полномочиях и нормативного конституционного контроля, правильного понимания конституционного статуса субъектов обращения и конкретизации правовых последствий решений Конституционного Суда.

Ключевые слова: Конституционный Суд, конституционное правосудие, споры о компетенции, споры о полномочиях, нормативный контроль, институциональный арбитраж, конституционное равновесие.

PATTERNS IN THE FORMATION OF THE CONSTITUTIONAL COURT'S POWER IN THE FIELD OF RESOLVING COMPETENCE DISPUTES: FROM NORMATIVE REVIEW TO INSTITUTIONAL ARBITRATION

Annotation

The article examines the theoretical, historical and comparative legal patterns in the formation of the constitutional court's power to resolve disputes concerning competence. The subject of the research is the transformation of the constitutional court from a body exercising normative review into a legal arbiter capable of resolving institutional conflicts arising between constitutional bodies. The aim of the article is to identify the conditions and logic under which the independent function of resolving disputes concerning competence and constitutional powers emerges within the system of constitutional justice. For this purpose, the article analyzes the nature of the constitution as a founding, organizing, and guiding act of public authority, the classical Kelsenian model of constitutional review, and the models of constitutional justice in Austria, Germany, France, and Russia. Special attention is paid to the gradual development of this power in the Republic of Armenia, from the initial constitutional model of 1995 to the constitutional amendments of 2005 and 2015, as well as the procedural mechanisms established by the 2018 Constitutional Law "On the Constitutional Court". The article substantiates that the current Armenian model has been formed as a mechanism for ensuring constitutional equilibrium; however, its effectiveness depends on the clear distinction between proceedings on disputes concerning powers and normative constitutional review, the proper understanding of the constitutional standing of applicants, and the clarification of the legal consequences of Constitutional Court decisions.

Keywords: Constitutional Court, constitutional justice, competence disputes, disputes concerning powers, normative review, institutional arbitration, constitutional equilibrium.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.05.2026 թ., փրվել է գրախոսության 27.05.2026 թ., ընդունվել է փաշագրության 18.06.2026 թ.: